ԶԻՆԱՊԱՀ®

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՍԻՆ՝ ԶԻՆՎՈՐԻՍ ԿՈՂՔԻՆ...

2023Թ. 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆԿԻՐԱԲԵՐԵԼ

zinapah.am

Բովանդակություն

- **ԶԻՆԱՊԱՀԻ կառավարումը և ֆինանսական վերլուծությունը**

  Կառավարման մարմինը և գործադիր թիմը
  Ամփոփ պատմությունը, առաքելությունը, տեսլականը և արժեքները
  Գործառնությունները 2017 – 2023թթ.
  Շահառուները և վճարված հատուցումները
  Նվիրատվությունները 2017 – 2023թթ.
  Շահառուներին միտված սոցիալական ծրագրեր և համագործակցություն
  Զարգացման ուղին դեպի անկախություն

- **2022թ. աուդիտորական հաշվետվություն**

Կառավարման մարմինը և գործադիր թիմը

ԶԻՆԱՊԱՀ
ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հոգաբարձուների խորհուրդ

Իրինա Սեյլանյան
Խորհրդի նախագահ

Ադամ Կաբլանյան
Խորհրդի անդամ

Ժոզեֆ Սիմոնյան
Խորհրդի անդամ

Անահիտ Ադամյան
Խորհրդի անդամ

Դավիթ Հակոբյան
Խորհրդի անդամ

Թիմ

Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Կարեն Սահակյան
Ներքին աուդիտ

Տաթևիկ Յաղջյան
ԳԳՏ տեղակալ
Գործառնությունների գծով տնօրեն

Լուսինե Զուրաբյան
Ֆինանսական տնօրեն

Սմբատ Սահյան
Հատուցումների գծով տնօրեն

Նարինե Գալստյան
Հանրային կապերի և հաղորդակցության տնօրեն

Իզաբելլա Մանասարյան
Դոնորների հետ հարաբերությունների և ֆոնդհայթայթման մենեջեր

Մնացական Ավետիսյան
Հատուցումների համակարգող

Արփինե Զարգարյան
Սոցիալական ծրագրերի համակարգող

Ֆելիքս Չիլինգարյան
Պորտֆելի կառավարիչ

Լիլիթ Ղաբուզյան
Հաշվետար

Վազգեն Մարտիրոսյան
SS ծրագրի մենեջեր

Մարի Բոյաջյան
Ադմինիստրատիվ օգնական

Նարե Ատոմյան
Ադմինիստրատիվ օգնական

ԶԻՆԱՊԱՀԻ ամփոփ պատմությունը, առաքելությունը, տեսլականը և արժեքները

ԶԻՆԱՊԱՀԸ ստեղծվել է 2017թ.՝ հայրենիքի սահմանները պաշտպանելիս զոհված կամ անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների ընտանիքներին, 1-ին և 2-րդ խմբի զինհաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներին կայուն ֆինանսական հատուցումներ տրամադրելու նպատակով՝ հանուն ապագա սերունդների խաղաղության ու անվտանգության:

2023թ. ապրիլին հիմնադրամը, որը հայտնի էր **որպես Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ, վերանվանվեց ԶԻՆԱՊԱՀ Զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամի:** Հիմնադրամը ապաքաղաքական կառույց է և գործում է համաձայն ՀՀ Օրենքի:

ԶԻՆԱՊԱՀԸ եզակի հիմնադրամ է տարածաշրջանում, որի շրջանակներում Հայաստանի յուրաքանչյուր աշխատող քաղաքացի պարտադիր վճար է կատարում իր աշխատավարձից: ԶԻՆԱՊԱՀԸ համահայկական նախաձեռնություն է, որի նպատակն է ապահովել կյանքը և առողջությունը հանուն Հայաստանի անվտանգության զոհաբերած զինծառայողների և նրանց ընտանիքների բարեկեցությունը:

ԶԻՆԱՊԱՀԻ միջոցները գոյանում են՝

- Հայաստանի հարկատուների կողմից վճարվող պարտադիր վճարներից (1,500-15,000 ՀՀ դրամ՝ կախված ամսական եկամուտից)
- Նվիրատվություններից, որոնք ստացվում են ողջ աշխարհից, այդ թվում՝ Հայաստանից
- ԶԻՆԱՊԱՀԻ ակտիվների կառավարումից ստացված արժևորումից

ԶԻՆԱՊԱՀԻ կառավարման բարձրագույն մարմինը Հոգաբարձուների խորհուրդն է, որը կազմված է բարձր հեղինակություն վայելող փորձառու մասնագետներից՝ ֆինանսների բանկային գործի, բիզնեսի, ճգնաժամային կառավարման, դրամահավաքի և ակտիվների կառավարման ոլորտներում:

ԶԻՆԱՊԱՀԻ գործառնական կառավարումը իրականացվում է բարձր մոտիվացիայով և փորձառու գործառնական թիմի կողմից:

ԶԻՆԱՊԱՀԻ կայքը արտացոլում է բոլոր ֆինանսական հոսքերը՝ նվիրատվությունները և պարտադիր վճարները, ինչպես նաև հրապարակում է շահառուների ցանկը և կատարված հատուցումները: ԶԻՆԱՊԱՀԻ կայքում հրապարակվում են նաև գլխավոր գործադիր տնօրենի եռամսյակային, տարեկան հաշվետվությունները և աշխարհի լավագույն 10 աուդիտորական ընկերություններից մեկի կողմից իրականացված Տարեկան աուդիտի հաշվետվությունները:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Համախմբել ազգին՝ կանգնելու զինծառայողների և նրանց ընտանիքների կողքին՝ ապահովելու նրանց ֆինանսական կայունությունը և արժանապատիվ կյանքը:

ՏԵՍԼԱԿԱՆԸ

Լինել սոցիալապես պատասխանատու հիմնադրամ զինծառայողների համար, որն իր մեջ ներառում է պարտադիր և կամավոր ապահովագրական հատուցումները:

ԱՐԺԵՔՆԵՐԸ

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅՈՒՆ

Այսօր մեր պարտքն է կանգնել զոհված, անհայտ բացակայող և հաշմանդամ դարձած մեր զինծառայողների և նրանց ընտանիքների կողքին:

ՆԱԽԱԲԱՆ

Կարինե Սարգսյան
Գործադիր գլխավոր տնօրեն
ԶԻՆԱՊԱՀ

Ամփոփելով 2023թ.՝ խորը երախտագիտություն և հիացմունք եմ հայտնում հրաշալի համայնքի՝ Հայաստանի յուրաքանչյուր հարկատուի, աշխարհասփյուռ մեր նվիրատուների, Հայաստանի Հանրապետության պետական համակարգի և մեր գործընկեր կազմակերպությունների անմնացորդ աջակցության համար: Ձեր առատաձեռնության և նվիրումի շնորհիվ մենք կատարեցինք մեր առաքելությունը անցնող տարում:

ԶԻՆԱՊԱՀ Զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամի ողջ թիմով երախտապարտ ենք ձեր հոգածության և շարունակական աջակցության համար: Այն հնարավորություն է տալիս ֆինանսական աջակցություն տրամադրել և սոցիալական ինտեգրման ծրագրեր իրականացնել մեր զինծառայողների և նրանց ընտանիքների համար:

ԶԻՆԱՊԱՀԻ ողջ թիմի անունից պատիվ ունեմ ներկայացնել 2023թ. մեր ձեռքբերումները:

2020թ. պատերազմից հետո 2021թ. ԶԻՆԱՊԱՀԻ համար եղավ ճգնաժամի կառավարման տարի, ինչպես գործառնական, այնպես էլ կառուցվածքային առումով: 2022-2023թթ. վերականգնման տարիներ են ակտիվների պահուստավորման և ամսական կանոնավոր հատուցումների վճարման առումով: Զուգահեռաբար աշխատանքներ են տարվել ԶԻՆԱՊԱՀԸ վերակազմակերպելու և որպես ինստիտուցիոնալ կառույց կայացնելու ուղղությամբ՝ կենտրոնանալով ԶԻՆԱՊԱՀԻ՝ որպես ֆինանսական կառույց հիմնական գործառույթի վրա: 2021-2023թթ. ԶԻՆԱՊԱՀԸ հատուցումներ է տրամադրել 5,198 շահառուների ընդհանուր առմամբ 85.7 մլրդ ՀՀ դրամի չափով: Շուրջ 138.4 մլրդ ՀՀ դրամ ձևավորվել է պարտադիր դրոշմանիշային վճարներից, 16 մլրդ՝ ակտիվների կառավարումից և 9.4 մլրդ՝ նվիրատվություններից:

2023թ. ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների թիվն ավելացել է 109-ով: Պարտադիր դրոշմանիշային վճարներից ձևավորված միջոցները կազմում են շուրջ 43.2 մլրդ ՀՀ դրամ, ակտիվների կառավարումից՝ 5.9 մլրդ ՀՀ դրամ, իսկ նվիրատվություններից՝ 273 մլն ՀՀ դրամ:

Աշխարհաքաղաքական իրավիճակը, ցավոք, շարունակում է մնալ վտանգավոր և ռիսկային, և մեր զինծառայողները վտանգում ենք իրենց կյանքն ու առողջությունը ապահովելու մեր սահմանների կայունությունն ու անվտանգությունը: ԶԻՆԱՊԱՀԻ ողջ թիմը հավատարիմ է իր առաքելությանը: Ձեր շարունակական աջակցության շնորհիվ մենք կյանքի ենք կոչում մեր առաքելությունը:

Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում ձեզ ևս մեկ տարի ԶԻՆԱՊԱՀԻ կողքին լինելու և աջակցելու համար: Այդ աջակցության շնորհիվ է, որ մենք կարողանում ենք ֆինանսական հատուցումներ տրամադրել մեր շահառուներին, պլանավորել և իրականացնել արժեքավոր ծրագրեր նրանց համար:

Եկեք համատեղենք մեր ջանքերը ԶԻՆԱՊԱՀԻ շահառուներին և նրանց ընտանիքներին ոգեշնչելու նպատակի շուրջ...

Հարգանքով՝
Կարինե Սարգսյան
Գլխավոր գործադիր տնօրեն
ԶԻՆԱՊԱՀ

ԶԻՆԱՊԱՀԻ գործառնությունները
2017 – 2023թթ.

2023թ. տարեվերջի դրությամբ ԶԻՆԱՊԱՀԸ գրանցել է շուրջ 26% եկամտի աճ նախորդ տարվա համեմատ, որը կազմում է 49,654 մլն ՀՀ դրամ՝ պայմանավորված պարտադիր դրոշմանիշային վճարների 22% աճով, ակտիվների կառավարման եկամտի 83% աճով, չնայած նվիրատվությունների զգալի՝ 46% անկմանը: Նվիրատվությունների անկումը պայմանավորված է հետպատերազմյան օրգանական անկումով, ինչպես նաև այն հանգամանքով, որ նվիրատվություններ ներգրավելու ուղղությամբ ներդրումներ չեն կատարվել:

2023թ. ԶԻՆԱՊԱՀԻ եկամտի պարտադիր վճարներին վերագրվող մասը կազմում է 87%՝ ի տարբերություն 2022թ. 90%-ի: Ակտիվների կառավարումից ձևավորվող եկամուտը գրանցել է աճ 4 տոկոսային կետով՝ դառնալով 12%՝ ի համեմատություն 2022թ. 8%-ի: Իսկ նվիրատվություններից գոյացող եկամուտը նվազել է -0.7 կետով՝ դառնալով 0.6%՝ ի համեմատություն 2022թ. 1.3%-ի:

ԶԻՆԱՊԱՀԻ ընդհանուր ծախսերը նվազել են 12%-ով և կազմում են 15,084 մլն ՀՀ դրամ: Հատուցումները նույնպես նվազել են 13%-ով՝ պայմանավորված նոր հատուցման դեպքերի քանակի նվազմամբ: Վարչական ծախսերի 8% աճը չի գերազանցում կանխատեսված բյուջետային 33%-ը: Աճը բացատրվում է պատվիրակված ծառայությունների միջնորդավճարների աճով, 1-ին եռամսյակում աշխատակազմի կրճատման հետ կապված վճարումներով, աշխատակազմի աշխատավարձերի վերանայումով, դրոշմանիշային վճարների վերադարձի կազմակերպման համար թիմի ներգրավվածության դիմաց վճարումներով:

2023թ. վարչական ծախսերի հարաբերությունը ընդհանուր ակտիվներին կազմում է 0.58%, ինչը չի գերազանցում օրենքով սահմանված առավելագույն 2%-ի շեմը:

ՄԼՆ ԴՐԱՄ	2017	2018	2019	2020	2021	2022	2023	2017-2023	2023թ. 2022-ի համեմատ	% հարաբ. 2022	% հարաբ. 2023
Եկամուտ պարտադիր վճարներից	5,919	7,390	8,470	9,134	29,072	35,274	43,199	138,459	22%	90%	87%
Նվիրաբերություններ	94	95	115	6,976	1,290	508	273	9,352	-46%	1.3%	0.6%
Կամուրջ*	-	-	-	1,000	1,510	239	237	2,986	-1%	0.6%	0.5%
ՀՀԿԲ**	-	-	-	-	301	-	-	301		0%	0%
Ակտիվների կառավարում	153	797	1,595	2,425	1,841	3,256	5,944	16,011	83%	8%	12%
Այլ եկամուտներ տուգանքներից	-	-	-	-	-	-	-	1	41%	0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏ	**6,167**	**8,282**	**10,180**	**19,535**	**34,015**	**39,278**	**49,654**	**167,110**	**26%**	**100%**	**100%**
Հատուցումներ	383	429	822	8,030	44,484	16,878	14,747	85,773	-13%	98%	98%
Վարչական ծախսեր	-	-	-	-	-	246	267	513	8%	1.4%	1.8%
Կապիտալ ծախսեր	-				105	3	45	153	-1535%	0.02%	0.30%
Գործառնական ծախսեր	-	-	-	-	149	21	25	196	19%	0.1%	0.2%
Այլ	-	0	0	-	-	-	-	0		0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**383**	**430**	**822**	**8,030**	**44,738**	**17,148**	**15,084**	**86,636**	**-12%**	**100%**	**100%**

* Կամուրջ – ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիր՝ նախքան ԶԻՆԱՊԱՀ շահառու դառնալը ծանր վիրավորված կամ անհայտ բացակայող զինծառայողներին հատուցում տալու համար: Այս ծրագրով նախատեսվում է հատուցում 36 ամսվա ընթացքում՝ ամսական 300,000 ՀՀ դրամի չափով:

** ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) ներդրում – 2021թ. ընթացքում կատարված բոլոր ծախսերը ֆինանսավորել է ՀՀ Կենտրոնական բանկը: Ֆինանսավորումը կարգավորվում է օրենքով և նախկինում հաստատվել է ԿԲ Խորհրդի կողմից:

ԶԻՆԱՊԱՀԻ գործառնությունները 2017 – 2023թթ.

ԶԻՆԱՊԱՀ
ԶԻՆՇԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԶԻՆԱՊԱՀԻ 2017-2023թթ. արդյունքները արտացոլված են ստորև գրաֆիկում՝ ըստ տարիների:

2023թ. նախորդ տարվա համեմատությամբ ընդհանուր եկամուտը գրանցել է 26% աճ՝ կազմելով 49,654 մլն ՀՀ դրամ, իսկ ընդհանուր ծախսերը 2022թ. համեմատությամբ նվազել են 12%-ով՝ կազմելով 15,084 մլն ՀՀ դրամ:

ԶԻՆԱՊԱՀԻ 2017-23թթ. եկամուտը ծախսերի համեմատ. ՄԼՆ ՀՀ դրամ



2023թ. 26% եկամտի աճը մասնավորապես պայմանավորված է պարտադիր վճարների 22% աճով, ինչը բացատրվում է.

- Աշխատողների ընդհանուր թվի 5% աճով՝ 743 հազար*
- Ընկերությունների թվի 6% աճով՝ 67.8 հազար*
- Միջին աշխատավարձի չափի 11% բարձրացումով մինչև 274 հազար ՀՀ դրամ

Ընկերությունների քանակ		
2022թ. նոյեմբեր	2023թ. նոյեմբեր	Նախորդ տարվա համեմատ
63,877	67,785	6%

Աշխատակիցների քանակ		
2022թ. նոյեմբեր	2023թ. նոյեմբեր	Նախորդ տարվա համեմատ
707,820	742,941	5%

Միջին աշխատավարձ		
2022թ. նոյեմբեր	2023թ. նոյեմբեր	Նախորդ տարվա համեմատ
247,820	274,066	11%

- 1 մլն և ավել ՀՀ դրամ աշխատավարձ ստացող աշխատողների կողմից դրոշմանիշային վճարի 48% աճով՝ համաձայն ՊԵԿ-ի պաշտոնական հաշվետվության:

Աշխատավարձի սահմանաչափ 2022թ. դեկտ. 2021թ. դեկտ. Համեմատ** '000	2021				2022				2022 նախորդ տարվա համեմատ	
	Աշխատողների քանակ	%	Դրոշմանիշային վճար	%	Աշխատողների քանակ	%	Դրոշմանիշային վճար	%	Աշխատողների քանակ	Դրոշմանիշային վճար
մինչև 100,000 ՀՀ դրամ	223	34%	334,329	13%	222	31%	332,961	11%	-0.4%	-0.4%
100,001-200,000 ՀՀ դրամ	196	30%	587,247	22%	198	28%	594,561	19%	1%	1%
200,001-500,000 ՀՀ դրամ	164	25%	901,555	34%	183	26%	1,006,308	33%	12%	12%
500,001-1,000,000 ՀՀ դրամ	53	8%	452,957	17%	65	9%	555,569	18%	23%	23%
1,000,001 ՀՀ դրամ և ավել	26	4%	387,630	15%	38	5%	573,840	19%	48%	48%
Ընդամենը	662	100%	2,663,717	100%	707	100%	3,063,238	100%	7%	15%

* Աղբյուր՝ Armstat.am, համեմատությունն արված է 2023թ. տարեսկզբից մինչև նոյեմբեր ժամանակահատվածի համար 2022թ.-ի նույն ժամանակահատվածի համեմատ

** Աղբյուր՝ ՊԵԿ հաշվետվություն 2022թ. տարեվերջի դրությամբ, որն ընդգրկում է միայն Հայաստանի տվյալները, առանց ուժային կառույցների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների

ԶԻՆԱՊԱՀԻ գործառնությունները 2017 – 2023թթ. 4-րդ ԵՌ.

2023թ. 4-րդ եռամսյակում ԶԻՆԱՊԱՀԸ գրանցել է եկամտի աճ 15%-ով նախորդ տարվա համեմատությամբ, շուրջ 12,301 մլն ՀՀ դրամ, ինչը պայմանավորված է պարտադիր վճարների 8% աճով, ակտիվների կառավարումից ստացված եկամտի 86% աճով, չնայած նվիրատվությունների 34% անկմանը:

Միևնույն ժամանակ, ընդհանուր ծախսերը նվազել են 37%-ով և կազմել 3,688 մլն. ՀՀ դրամ, իսկ հատուցումները նվազել են ամսական 38%-ով, քանի որ հատուցումների մեծ մասը կազմել են ամսական գումարները՝ ի հակադրություն միանվագ վճարումների՝ պայմանավորված դեպքերի ցածր թվով:

2023թ. 4-րդ եռամսյակում ԶԻՆԱՊԱՀԻ եկամտի մասնաբաժինը, որը վերագրվում է պարտադիր վճարներին, կազմել է 84% ՝ ի համեմատություն 90%-ի 2022թ.: Ակտիվների կառավարումից ստացված եկամուտը 15% աճ է գրանցել և մեծացել 6 տոկոսային կետով, մինչդեռ նվիրատվությունների մասնաբաժինը կայուն է և կազմում է 1%: Վարչական ծախսերը նվազել են 14%-ով, իսկ գործառնական ծախսերը՝ 61%-ով: Կապիտալ ծախսերի աճը պայմանավորված է ԶԻՆԱՊԱՀԻ նոր կայքի մշակման համար վճարված կանխավճարով, որը ֆինանսավորվել է ԿԲ-ի կողմից և ներառվել է 2021թ. եկամուտներում:

ՄԼՆ ԴՐԱՄ	ԵՌ4 2022	ԵՌ4 2023	2022 ԵՌ1-4	2023 ԵՌ1-4	2023-ը 2022-ի համեմատ	ԵՌ4 '23 ԵՌ4 '22 համեմատ	% հարաբ ԵՌ4 '22	% հարաբ ԵՌ4 '23
(ԴՐԱՄ)								
Եկամուտ պարտադիր վճարներից	9,553	10,358	35,274	43,199	22%	8%	90%	84%
Նվիրաբերություններ	95	63	508	273	-46%	-34%	1%	1%
Կամուրջ*	38	65	239	237	-1%	70%	0%	1%
ՀՀԿԲ**	-	-	-	-	-	-	0%	0%
Ակտիվների կառավարում	975	1,815	3,256	5,944	83%	86%	9%	15%
Այլ եկամուտներ տուգանքներից	0	0.26	-	-	41%	41%	0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏ	**10,662**	**12,301**	**39,278**	**49,654**	**26%**	**15%**	**100%**	**100%**
Հատուցումներ	5,731	3,576	16,878	14,747	-13%	-38%	99%	97%
Վարչ. ծախսեր	75	64	246	267	8%	-14%	1%	2%
Կապ. ծախսեր	1	43	3	45	1535%	4490%	0%	1%
Գործառնական ծախսեր	9	3	21	25	19%	-61%	0%	0%
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**5,815**	**3,688**	**17,148**	**15,084**	**-12%**	**-37%**	**100%**	**100%**

* Կամուրջ – ՀՀ կառավարության կողմից ֆինանսավորվող ծրագիր՝ նախքան ԶԻՆԱՊԱՀԻ շահառու դառնալը ծանր վիրավորված կամ անհայտ բացակայող զինծառայողներին հատուցում տալու համար: Այս ծրագրով նախատեսվում է հատուցում 36 ամսվա ընթացքում՝ 300,000 ՀՀ դրամի չափով:

** ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀԿԲ) ներդրում – 2021թ. ընթացքում կատարված բոլոր ծախսերը ֆինանսավորել է ՀՀ Կենտրոնական բանկը: Ֆինանսավորումը կարգավորվում է օրենքով և նախկինում հաստատվել է ԿԲ Խորհրդի կողմից:

2023թ. համեմատությունը
2017-2023թթ. հետ. ամփոփ պատկերը

- Պարտադիր վճարների 31%-ը կատարվել է 2023թ.
- Նվիրատվությունների 3%-ը կատարվել է 2023թ.
- Ակտիվների կառավարման եկամտի 37%-ը ձևավորվել է 2023թ.
- Հատուցումների 17%-ը վճարվել է 2023թ.

ՄԼՆ ԴՐԱՄ	2022	2023	2017-2023	% հարաբ 2023
Պարտադիր վճարներ	35,274	43,199	138,459	31%
Նվիրաբերություններ	508	273	9,352	3%
Ակտիվների կառավարում	3,256	5,944	16,011	37%
Հատուցումներ	16,878	14,747	85,773	17%

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուները և վճարված հատուցումները 2023թ.

	2023 1ԵՌ	2023 2ԵՌ	2023 3ԵՌ	2023 4ԵՌ	Total 2023
1-ին խմբի հաշմ. կարգ	2	5	-	-	4
2-րդ խմբի հաշմ. կարգ	12	4	5	2	23
Անհայտ բացակայող	6	2	3	6	17
Զոհված	33	14	9	9	65
Ընդամենը	53	22	17	17	109

- **2017-2023թթ. ավարտին** ԶԻՆԱՊԱՀԸ հատուցում է տրամադրել **5,198** շահառուների:
- 2023թ. 4-րդ եռամսյակում գրանցվել են **17 նոր դեպքեր և 109 դեպքեր 2023թ. սկզբից ի վեր:**
- **2023թ. 4-րդ եռամսյակի 17 նոր դեպքերի բաշխվածությունը ստորև՝ ըստ շահառուների դասակարգման:**

ԶՈՀՎԱԾ **9**

ԱՆՀԱՅՏ ԲԱՑԱԿԱՅՈՂ **6**

1-ին խումբ **0**

2-րդ խումբ **2**

2017-2023ԹԹ. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ՝ 5,198 ԴԵՊՔԵՐՈՎ



ԶԻՆԱՊԱՀԻ շահառուները և վճարված հատուցումները 2017-2023թթ.

2017-2023թթ. **5,198 դեպքերը** բաշխված են ըստ շահառուների դասակարգման:
45% ժամկետային շարքայիններ են, մինչդեռ **31%** զորահավաքային շարքայիններ, սպաներ, **16%** պայմանագրային շարքայիններ և **8%** կամավորներ:

2017-2023ԹԹ. ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԸ՝ ԸՍՏ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԵՎ ԿՈՉՄԱՆ, 5,198 ԴԵՊՔՈՎ





2017-2023ԹԹ. ԿՏՐՎԱԾՔՈՎ ԱՄՓՈՓ ՊԱՏԿԵՐԸ

17

Նոր հատուցման դեպքեր 2023թ. 4-րդ եռամսյակում և 5,198 դեպքեր 2017-2023թ.

14.7

մլրդ ՀՀ դրամի հատուցում 2023թ. և 85.8 մլրդ ՀՀ դրամի հատուցում 2017-2023թթ.՝ որպես ապահովագրություն զոհվածներին, անհայտ բացակայողներին և հաշմանդամության ապահովագրության իրավունք ունեցողներին

22%

պարտադիր վճարի աճ 2023թ. վերջին 2022թ. համեմատությամբ

ԶԻՆԱՊԱՀԻ նվիրատվությունները 2017-2023թթ.

2017-2023թթ. ԶԻՆԱՊԱՀԻ նվիրատվությունները կազմում են շուրջ 9.3 մլրդ ՀՀ դրամ: 2023թ. 4-րդ եռամսյակի դրությամբ նվիրատվությունների ընդհանուր թիվը կազմում է գրեթե 88,000՝ միջին նվիրատվության գումարը՝ 106,000 ՀՀ դրամ: Ամենաշատ նվիրատվությունները կատարվել են պատերազմական էսկալացիաների ժամանակ:

2023թ. նվիրատվությունների գումարը համեմատած 2022թ. հետ նվազել են -46%-ով: Նվիրատվությունների թիվը նվազել է -59%-ով, իսկ նվիրատվությունների միջին չափը աճել է 31%-ով: Դա բացատրվում է հետպատերազմյան իրավիճակով, քանի որ պատերազմի ժամանակ նվիրատվությունները սովորաբար կտրուկ աճ են ունենում, ինչն արտահայտվել է 2020թ. արդյունքներում: Նվիրատվությունների ամենամեծ անկումը գրանցվել է ռուբլիով արված նվիրատվություններում՝ պայմանավորված Ռուսաստանի դեմ իրականացվող սանկցիաներով և միջազգային փոխանցումների սահմանափակումներով: Նվիրատվությունները կատարվել են բանկային փոխանցումներով, ինչպես նաև www.zinapah.am կայքի միջոցով:

2017-2023թթ. նվիրատվությունները ըստ արժույթի

Արժույթը, ' 000 000	2017	2018	2019	2020	2021	2022	2023	2017-2023	2023 նախորդ տարվա համեմատ
ՀՀ դրամ	94,321	89,136	113,038	4,380,043	765,793	301,333	138,650	5,917,414	-42%
Դոլար		2	5	4.826	879	492	166	6,437	-53%
Ռուբլի		80	82	114,908	6,517	455	1	122,042	-100%
Եվրո		1	0,420	797	122	34	15	975	-41%
2017-2023թթ. նվիրատվությունները ՀՀ դրամով									
	94,321	94,839	115,451	6,975,856	1,290,065	508,062	210,673	9,351,901	-46%
Նվիրատվությունների քանակ	445	1,050	1,312	41,769	25,976	12,665	4,025	88,426	-59%
Նվիրատվությունների միջին չափը	212	90	88	167	50	40	52	106	31%

2017-2023թթ. 1-4-րդ եռամսյակներիի նվիրատվությունները



Դրոշմանիշային վճարների վերադարձ, 2023թ.

Դրոշմանիշային վճարների վերադարձ 2022թ.			
	Զոհված	Զինծառայող	Ընդամենը
Վերադարձերի քանակ զինծառայող	2,170 44%	2,815 56%	4,985 100%
Վերադարձերի գումար մլն ՀՀ դրամ	101 43%	135 57%	236 100%

Դրոշմանիշային վճարների վերադարձ 2023թ.			
	Զոհված	Զինծառայող	Ընդամենը
Վերադարձերի քանակ զինծառայող.	2,586 37%	4,387 63%	6,973 100%
Վերադարձերի գումար մլն ՀՀ դրամ	138 41%	200 59%	338 100%

2023 համեմատ 2022			
	Զոհված	Զինծառայող	Ընդամենը
Վերադարձերի քանակ	19%	56%	40%
Վերադարձերի գումար մլն ՀՀ դրամ	37%	48%	43%

- **2022թ. համեմատությամբ դրոշմանիշային վճարների վերադարձը քանակապես աճել է 40%-ով, ընդհանուր գումարը՝ 43%-ով:**
- **Ընդհանուր առմամբ 338 մլն ՀՀ դրամի չափով վերադարձ է կատարվել 6,973 դիմորդների, որից՝**
  - 41%-ը զոհված զինծառայողի հիմքով
  - 59%-ը ժամկետային զինծառայության մեջ գտնվողի հիմքով

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների սոցիալական ծրագրեր և համագործակցություն

ԶԻՆԱՊԱՀԸ համագործակցում է տարբեր հիմնադրամների, ոչ պետական բարեգործական կազմակերպությունների հետ՝ աջակցելով զինծառայողներին և նրանց ընտանիքներին՝ ֆիզիկական, հոգեբանական, կրթական, բարեկեցության ապահովման նպատակով:

Հաշվի առնելով շահառուների հետ կապի պահպանման կարևորությունը՝ ԶԻՆԱՊԱՀԻ թիմը քայլեր է նախաձեռնել իր շահառուների հետագա զարգացման և սոցիալական ինտեգրման ծրագրերի մեկնարկի ուղղությամբ: ԶԻՆԱՊԱՀԸ շարունակում է ընդլայնել համագործակցող ընկերությունների ցանկը և նոր համագործակցության հուշագրեր է ստորագրում: Մեր նպատակն է համախմբել, միավորել և համակարգել պետական, մասնավոր հատվածը, ՀԿ-ներին, բարեգործական կազմակերպությունների զինծառայողներին և նրանց ընտանիքներին աջակցելու գաղափարի շուրջ:

Ֆինանսական գրագիտության դասընթաց՝ ԶԻՆԱՊԱՀԻ նախաձեռնությամբ

Համագործակցելով ՀՀ Կենտրոնական Բանկի (ԿԲ) էյԲիՍի Ֆայնենսի և ԶԻՆԱՊԱՀԻ գործընկեր հանդիսացող Ոխումնական Առաքելություն ՀԿ-ի հետ՝ ԶԻՆԱՊԱՀԸ հրավիրեց ֆինանսական գրագիտությանն ուղղված առցանց երկօրյա դասընթաց, որին կարողացան մասնակցել ԶԻՆԱՊԱՀԻ, ինչպես նաև Ոխումնական Առաքելություն ՀԿ-ի շահառուները, որոնց թվում էին 1-ին, 2-րդ, 3-րդ խմբի շուրջ 25 զինհաշմանդամություն ունեցողներ և պատերազմի մասնակիցներ:

Դասընթացը վարում էր ոլորտում փորձառու, ԿԲ Ֆինանսական համակարգի կայունության և կարգավորման դեպարտամենտի Սպառողների շահերի պաշտպանության և ֆինանսական կրթման կենտրոնի ավագ մասնագետ Արաքս Մանուչարյանը: Դասընթացի նպատակն էր բարձրացնել ֆինանսական գրագիտությունը, ծանոթացնել անձնական/ընտանեկան ֆինանսների կառավարման մեթոդներին, ինչը լսարանին հետագայում թույլ կտա կայացնել ավելի պատասխանատու որոշումներ ֆինանսների կառավարման առումով: Քանի որ դասընթացից հետո ԶԻՆԱՊԱՀԸ ստացավ շատ դրական արձագանքներ, 2024թ. նախատեսվում է անցկանցել ևս մի քանի դասընթացներ:

Հայկական հոգևոր վերականգնման հիմնադրամի նախաձեռնություն

Նպատակ ունենալով աջակից դառնալ հետպատերազմյան տրավմատիկ սինդրոմներ ունեցող պատերազմական գործողությունների անմիջական մասնակիցներին, նրանց ընտանիքների անդամներին, Արցախից բռնի տեղահանվածներին՝ **Հայկական հոգևոր վերականգնման հիմնադրամը** կազմակերպել էր համայնքային հանդիպումների շարք հոգևոր հոգեբանական յուրահատուկ նարատիվային ձևաչափով: Համատեղ աշխատանքների շնորհիվ հանդիպումներին մասնակից դարձան նաև ԶԻՆԱՊԱՀԻ շուրջ 60 շահառուներ, որոնցից շատերն առաջնային հանդիպումներից հետո ցանկություն հայտնեցին շարունակել արդեն խմբային թերապիաները:

Համայնքային հանդիպումներ իրականացվեցին Մասիսում, Աբովյանում, Երևանում, Արմավիրում, Գյումրիում, Վանաձորում: Վերջին 2 համայնքներում անմիջական մասնակցություն ունեցանք նաև մենք: Գյումրու և Վանաձորի համայնքային հանդիպումներից մի քանի դրվագ տեսանյութում:

ZINHUB

2023թ. նոյեմբերի 30-ին տեղի ունեցավ **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ԶԻՆԱՊԱՀ զինծառայողների ապահովագրության ազգային հիմնադրամի և Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի** համատեղ նախաձեռնությամբ ստեղծված ZINHUB միասնական առցանց հարթակի ներկայացումը: Միջոցառմանը ներկա էին բարձրաստիճան պաշտոնյաներ, գործընկեր ՀԿ-ների ներկայացուցիչներ, այլ շահագրգիռ կողմեր:

ZINHUB միասնական առցանց հարթակում համագործակցող ընկերությունները կարող են տեղադրել իրենց կողմից առաջարկվող դասընթացները, առկա ծրագրերը, ինչպես նաև առաջարկել աշխատանքի հնարավորություններ: Իսկ հարթակի օգտատերերը կարող են հեշտությամբ կողմնորոշվել, գտնել դասընթացի և աշխատանքի վերաբերյալ իրենց հետաքրքրող հայտարարությունները: Հարթակն ունի տարբեր բաժիններ՝ նախատեսված դասընթացների, աշխատանքի և այլ ծրագրերի համար:

ZINHUB միասնական առցանց հարթակը հնարավորություն է տալիս պատերազմի մասնակիցներին և նրանց ընտանիքի անդամներին, ինչպես նաև դժվարին իրավիճակում հայտնված անձանց մասնակցելու համապատասխան դասընթացների, ստանալու նոր կարողություններ ու հմտություններ և աշխատաշուկայում դառնալ մրցունակ:

ԶԻՆԱՊԱՀԻ շահառուների սոցիալական ծրագրեր և համագործակցություն

ՀԱՅՈՐԴԻ նախաձեռնություն - Իմ Նոր Տարի

ՀԱՅՈՐԴԻ նախաձեռնությամբ 2023թ. դեկտեմբերի 16-ից մինչև հունվարի 2-ը ԶԻՆԱՊԱՀՆ իր գործընկեր հանդիսացող մի քանի հասարակական/բարեգործական կազմակերպությունների հետ համատեղ աշխատանքների արդյունքում ամանորյա հեքիաթի մասնակից դարձրեցին ԶԻՆԱՊԱՀԻ երեխա շահառուներին, մասնավորապես արցախահայ զոհված զինծառայողների երեխաներին, քույրերին եղբայրներին, ինչպես նաև Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին՝ **5-14 տարեկան շուրջ 700 երեխաների**: Նրանք հնարավորություն ստացան անվճար մասնակցելու Երգի Պետական Թատրոնի կողմից կազմակերպված Իմ Նոր Տարի մանկապատանեկան մյուզիքլին: Միջոցառումը դրական լիցքեր փոխանցեց մանուկ հանդիսատեսին: Նրանք ստացան նաև հիանալի նվերներ:

ՀԱՅՈՐԴԻ նախաձեռնություն - Տիկնիկային թատրոն

2023թ. դեկտեմբերի 27-ին **ՀԱՅՈՐԴԻ նախաձեռնությունը, ID Bank-ը, Idram Junior-ը և Idram Payment System-ը** գաղտնի Ձմեռ Պապ դարձան պատերազմի հետևանքով կորուստ ունեցած շուրջ 200 երեխաների համար: Երեխաները Հովի. Թումանյանի անվան Երևանի պետական Տիկնիկային Թատրոնում վայելեցին **Սանտայի Նվերները** ներկայացումը, որից հետո ստացան անվանական նվեր-փաթեթներ:

Փոխըմբռնման հուշագիր Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) հետ

2023թ. հոկտեմբերի 19-ին ՀԲԸՄ-ի հետ ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր՝ ԶԻՆԱՊԱՀԻ շահառուներին սոցիալական նախագծերում աջակցելու և հասարակությանը նրանց ինտեգումը դյուրինացնելու նպատակով:

Փոխըմբռնման հուշագիր Հայկական հոգևոր վերականգնման հիմնադրամի հետ

2023թ. նոյեմբերի 13-ին փոխըմռնման հուշագիր է ստորագրվել Հայկական հոգևոր վերականգնման հիմնադրամի հետ՝ ԶԻՆԱՊԱՀԻ շահառուներին հոգեկան առողջության վերականգնման կարևոր գործընթացում աջակցելու համար:

ԶԻՆԱՊԱՀԻ զարգացման ուղին դեպի ֆինանսական անկախություն

2017թ. հիմնադրման ժամանակ ԶԻՆԱՊԱՀԸ կառավարվում էր Հայաստանի Կենտրոնական բանկի կողմից կամավորական սկզբունքով: 2021թ. սկսած ԶԻՆԱՊԱՀԸ տարանջատվում է ԿԲ-ից՝ դառնալու անկախ իրավաբանական անձ իր սեփական ենթակառուցվածքով:

ԹԻՄ

- ԶԻՆԱՊԱՀԻ՝ որպես ֆինանսական կառույց իր հիմնական իրավասությունների վրա կենտրոնանալու վերափոխման ավարտ 2023թ մարտի սկզբին: Ներկայումս կառավարվում է 13 հոգուց բաղկացած թիմի կողմից
- Կազմակերպչական ձեռնարկի մշակում
- Կատարողականի մշակման և գնահատման համակարգի փորձնական ներդրում թվային Teamflect համակարգով
- Ղեկավար մարմինն է Հոգաբարձուների խորհուրդը 5 անդամներով

ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հաղորդակցման քաղաքականության մշակում
- Ներդրումային քաղաքականության ընդունում
- Սթրեսի սցենարների պլանավորում
- Գնումների կանոնակարգի մշակում
- ԶԻՆԱՊԱՀԻ վերաբրենդավորման արշավների մեկնարկ
- Շահառուների միասնական հարթակի պլանավորում և ներդրում
- 2022թ. աուդիտ

ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- ՄՌ կառավարում
- Հաշվապահական ծառայություններ
- Հաճախորդների զանգերի կենտրոն
- SS անվտանգություն
- Իրավախորհրդատու

ՄԻԳՐԱՑԻԱ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

- Միգրացիայի ավարտ ԿԲ-ից
- ԶԻՆԱՊԱՀԻ կայքի (ենթակառուցվածքի) մշակման սպասարկման Տեխն. Առաջադրանքի վերջնականացում մրցույթ և հաղթողի ընտրություն
- Բիզնես գործընթացների վերանախագծում, վերաճարտարագիտություն և ավտոմատացում
- Դրոշմանիշային վճարների վերադարձի պարտադիր գործընթացի ավտոմատացում
- Հատուցման համակարգի SS անվտանգություն
- SS անվտանգության քաղաքականության մշակում

ԻՐԱՎԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Դրոշմանիշային վճարների վերադարձի կանոնակարգում
- Գործադիր կոմիտեի փոփոխություն
- Կանոնադրության փոփոխություն՝ նոր ապրանքանիշի անվանումն արտացոլելու համար
- ԶԻՆԱՊԱՀԻ օրենքի փոփոխություն՝ աջակցելու հաշմանդամության կարգավիճակի փոփոխությանը երկրորդից երրորդ խմբի դեպքում
- Սոցիալական ծրագրերի իրականացման կանոնակարգի մշակում

ԶԻՆԱՊԱՀԻ 2022թ. աուդիտն իրականացրել է **Գրանթ Թորնթոն ՓԲԸ**-ն, իսկ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») համաձայն, որոնք հրապարակվել են Միջազգային հաշվապահական ստանդարտների խորհրդի («ՄՀՍԽ») կողմից: Դրանք պատրաստվել են այն ենթադրությամբ, որ Հիմնադրամը գործում է շարունակական հիմունքներով: Ամբողջական զեկույցը կարող եք գտնել ստորև ինչպես նաև ԶԻՆԱՊԱՀԻ կայքում:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամով	Ծանոթ.	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ-ընթացիկ ակտիվներ			
Գույք և սարքավորում		126,849	156,733
Ոչ նյութական ակտիվներ		12,742	3,436
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	4	620,521	1,402,309
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	5	8,681,686	7,303,869
		9,441,798	8,866,347
Ընթացիկ ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր		7,459	6,974
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	4	1,215,099	1,884,276
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	5	32,674,544	10,497,727
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	2,389,638	2,470,298
		36,486,740	14,859,275
Ընդհանուր ակտիվներ		45,928,538	23,725,622
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հատուցման պարտավորություններ	7	107,762,538	102,912,893
Վարձակալական պարտավորություններ		32,130	33,651
		107,794,668	102,946,544
Ընթացիկ պարտավորություններ			
Հատուցման պարտավորություններ	7	13,314,038	12,176,620
Վարձակալական պարտավորություններ		27,415	40,343
Կրեդիտորական պարտքեր		14,536	9,129
		13,355,989	12,226,092
Զուտ ակտիվներ			
Այլ համապարփակ եկամտի միջոցով իրական արժեքով		(57,586)	(29,979)
չափվող արժեթղթերի վերագնահատման պահուստը	8	(75,164,533)	(91,417,035)
(Կուտակված վնաս)/չբաշխված շահույթ		(75,222,119)	(91,447,014)
Ընդհանուր պարտավորություններ և զուտ ակտիվներ		45,928,538	23,725,622

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամով	Ծանոթ.	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտ			
Եկամուտ պարտադիր վճարներից և նվիրաբերություններից	9	36,021,512	32,173,532
Ֆինանսական եկամուտ	10	3,256,038	1,841,151
Այլ եկամուտ		188	240
		39,277,738	34,014,923
Ծախսեր			
Հատուցման ծախսեր		(12,983,465)	(123,280,125)
Աշխատակիցների նպաստներ		(118,480)	(76,326)
Մաշվածություն և ամորտիզացիա		(33,625)	(18,050)
Շահույթ/(վնաս) ակնկալվող վարկային կորուստների գծով			
պահուստի վերաչափումից	11	84,462	51,881
Ֆինանսական ծախսեր	12	(9,888,750)	(9,292,770)
Այլ ծախսեր		(83,551)	(51,497)
Զուտ վնաս փոխանակման տարբերություններից		(1,827)	(263)
		(23,025,237)	(132,667,150)
		16,252,502	(98,652,227)
Տարվա արդյունք			
Այլ համապարփակ եկամուտ			
Հոդվածներ, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթին կամ վնասին			
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունից զուտ վնաս		(20,961)	(89,886)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստի փոփոխություններ		(6,646)	(7,442)
Տարվա այլ համապարփակ վնաս		(27,607)	(97,328)
Ընդամենը տարվա համապարփակ վնաս		16,224,895	(98,749,555)

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամով	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող արժեթղթերի իրական արժեքի վերագնահատման պահուստ	Կուտակված շահույթ/(վնաս)	Ընդամենը
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	67,349	7,235,192	7,302,541
Տարվա արդյունք	-	(98,652,227)	(98,652,227)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական վնաս	(97,328)	-	(97,328)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(97,328)	(98,652,227)	(98,749,555)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	29,979	91,417,035	91,447,014
Տարվա արդյունք	-	(16,252,502)	(16,252,502)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական վնաս	(27,607)	-	(27,607)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(27,607)	(16,252,502)	(16,224,895)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(57,586)	(75,164,533)	(75,222,119)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամով	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ստացված պարտադիր վճարներ և նվիրաբերություններ	36,021,512	32,173,532
Տրամադրված հատուցումներ	(16,877,925)	(44,483,704)
Աշխատանքային ծախսեր	(82,302)	(50,870)
Այլ եկամուտ	56	88
Այլ ծախսեր	(147,024)	(95,041)
Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	18,914,317	(12,455,995)
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(2,530)	(88,455)
Բանկերում տեղաբաշխված միջոցներ	(25,975,000)	(12,825,000)
Ներդրումներ պետական պարտքային արժեթղթերում	-	-
Բանկերում տեղաբաշխված միջոցների մարում	4,370,000	15,770,000
Մուտքեր պետական պարտքային արժեթղթերում կատարված ներդրումների մարումից	1, 400,000	-
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսներ	991,721	2,323,286
Պետական պարտքային արժեթղթերում ներդրումներից ստացված տոկոսներ	222,500	285,500
Ներդրումային գործունեությունից ստացված/(օգտագ.) զուտ դրամական միջոցներ	(18,993,309)	5,465,331
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	(78,992)	(6,990,664)
Արտարժույթի ազդեցությունը կանխիկի վրա	(1,668)	(264)
Կանխիկի և դրամական միջոցների համարժեքների վրա ակնկալվող վարկային կորստի ազդեցությունը	-	1,157
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին	2,470,295	9,460,069
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	2,389,638	2,470,298

ԶԻՆԱՊԱՀ
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ցանկանում ենք մեր խորին շնորհակալությունը հայտնել Հայաստանի և ամբողջ աշխարհի բոլոր անհատներին, կազմակերպություններին/համայնքներին, ովքեր կատարել են իրենց պարտադիր դրոշմանիշային վճարումները և անհատական նվիրատվությունները:

Ձեր աջակցության շնորհիվ ԶԻՆԱՊԱՀԸ կարողանում է իրականացնել իր առաքելությունը՝ հոգալ այն զինծառայողների և նրանց ընտանիքների կարիքները, ովքեր իրենց կյանքն ու առողջությունը զոհաբերել են հանուն Հայաստանի և նրա սահմանների անվտանգության:
ԶԻՆԱՊԱՀ

Միասին՝ զինվորիս կողքին...

ԶԻՆԱՊԱՀ®
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՑԵՔ ՄԵԶ

ՃԱՆԱՉԵՔ ՄԵԶ

Իմացեք ավելին ԶԻՆԱՊԱՀԻ մասին։
Այցելեք մեր կայքը, հետևեք մեզ սոցիալական հարթակներում։

ԱՋԱԿՑԵՔ ՄԵԶ

Կատարեք ձեր նվիրատվությունը և աջակցեք զինվորներին ու նրանց ընտանիքներին, ովքեր զոհաբերել են ամենակարևորը՝ իրենց կյանքն ու առողջությունը հանուն Հայրենիքի։

ՊԱՏՄԵՔ ՄԵՐ ՄԱՍԻՆ

Պատմեք մեր առաքելության և կատարած աշխատանքի մասին։

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ

ԶԻՆԱՊԱՀ®

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԻԱՍԻՆ՝ ԶԻՆՎՈՐԻՍ ԿՈՂՔԻՆ...

@zinapah

zinapah.am

info@zinapah.am

Վազգեն Սարգսյան փող. 26/1
Երևան, 0010, ՀՀ

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ